



ՄՈՒՐԲ ՅԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Խ ԿԵՂԵՅԻ



ԽԱՉԿԵՐԱՅ

13 ՍԵՊԵՏԵՄԲԵՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Աստուած կը Պատժէ՞	Էջ 2
Ծանուցում	Էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐՔԷՆ

(49.13-23)

Ուրխացի՛ր երկինք, ցնծա՛ երկիր, ո՛վ լեռներ, Տիրոջ արդարութիւնը պատմեցէք, ո՛վ բլուրներ, որովհետեւ Տէրը իր ժողովուրդին ողորմեցաւ եւ իր ժողովուրդին խոնարհները մխիթարեց: Երուսաղէմի ժողովուրդը կ'ըսէր. «Տէրը զիս լքեց ու մոռցաւ»:

Բայց Տէրը կ'ըսէ. «Միթէ մայր մը կրնա՞յ իր դիեցուցած զաւակը մոռնալ, կամ իր որովայնէն ծնած երեխային չզթալ. բայց նոյնիսկ եթէ այդպիսի մայր մը գտնուի, ես քեզ պիտի չմոռնամ բնաւ: Տե՛ս, ահա, քեզ ավերուս մէջ նկարեցի,

«Միթէ մայր մը կրնա՞յ իր դիեցուցած զաւակը մոռնալ, կամ իր որովայնէն ծնած երեխային չզթալ»:

եւ աւերակ պարիսպներուդ պատկերը միշտ աչքիս առջեւ է: Շուտով զաւակներդ կը վերադառնան, մինչ քեզ քանդողներն ու աւերողները կը հեռանան: Շուրջդ նայէ եւ տե՛ս, արդէն զաւակներդ կը հաւաքուին ու քեզի կու գան: Եւ ես, կենդանի Աստուածս, կ'ըսեմ. անոնք քեզ պիտի ծածկեն պատմուճանի պէս եւ անոնցմով պիտի զարդարուիս հարսի պէս: Աւերակներդ եւ քանդուած ու կործանած քաղաքներդ

շուտով նեղ պիտի գան բնակիչներուդ համար, եւ քեզ հարստահարողները պիտի հեռանան: Օտարութեան մէջ կորսուած զաւակներդ պիտի դառնան եւ ըսեն. «Այս տեղը նեղ է մեզի, տեղ տուր որ բնակինք»: Եւ դուն ինքնիրենդ պիտի խորհիս. «Ասոնք ո՞վ ծնաւ ինծի. չէ՞ որ անզաւակ եւ այրի մնացի երբ զաւակներս աքսորուեցան ու պանդխտացան, զիս մինակ թողլով. արդ ուրկէ՞ եկան եւ ո՞վ մեծցուց զանոնք»»: Տէր Աստուած այսպէս կ'ըսէ. «Ահա ես փրկութիւնս հեթանոսներուն վրայ պիտի տարածեմ եւ իմ նշանս ժողովուրդներու մէջ պիտի կանգնեմ. անոնք գրկած պիտի բերեն քու զաւակներդ, իրենց ուսերուն վրայ պիտի բերեն քու դուստրերդ: Թագաւորներ քեզ պիտի որդեգրեն ու թագուհիներ քեզ պիտի սնուցանեն. մինչեւ գետին խոնարհելով քեզի պիտի երկրպագեն ու ոտքերուդ փոշին պիտի լիզեն, եւ պիտի գիտնաս թէ ե՛ս եմ Տէրը. ինծի ապաւինողները երբեք ամօթով պիտի չմնան»:

«Ինծի ապաւինողները երբեք ամօթով պիտի չմնան»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ
ՆԱՄԱԿԷՆ
(6.14-18)

Գալով ինծի, քաւ լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն գատ ուրիշ բանով պարծենամ: Այդ խաչին միջոցաւ մեղքի աշխարհը մեռած է այլեւս ինծի համար, ինչպէս ես մեռած եմ այդ աշխարհին համար: Կարեւորը

Այդ խաչին միջոցաւ մեղքի աշխարհը մեռած է այլեւս ինձի համար, ինչպէս եւ մեռած եմ այդ աշխարհին համար:

մարդու թլփատուած կամ անթլփատ ըլլալը չէ, այլ նոր արարած ըլլալը: Թող Աստուծոյ խաղաղութիւնն ու ողորմութիւնը ըլլան բոլո՛ր անոնց հետ՝ որոնք այս սկզբունքին համաձայն կ'ապրին. բոլո՛ր անոնց՝ որոնք իր ընտրեալ ժողովուրդը կը կազմեն:

Այսուհետեւ, խնդրեմ, ոեւէ մէկը աշխարհիկ հոգեբով թող զիս չնեղէ, որովհետեւ ես Յիսուսի կը պատկանիմ, ինչպէս մարմնիս վրայ վերքերուն սպիները կը վկայեն:

Եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ ըլլայ: Ամէն:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ

(3.13-21)

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-
«Ոչ ոք երկինք ելաւ բացի մարդու Որդիէն, որ իջաւ երկինքէն, ուր կը գտնուէր: Եւ ինչպէս որ Մովսէս պղնձեայ օձը

Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չմեռնի, այլ յաւիտենական կեանք ունենայ:

բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս ալ պէտք է մարդու Որդին բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չմեռնի, այլ յաւիտենական

կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ զրկեց, ո՛չ թէ որպէսզի Որդին աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր, արդէն իսկ

դատապարտուած է, Աստուծոյ Որդիին չհաւատալուն համար:

«Եւ Դատապարտութիւնը այս է. հակառակ անոր որ լոյսը աշխարհ եկաւ, մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով որ չար գործ կը կատարէ, կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին: Սակայն ով որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է, լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած են»:

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՊԱՏԺԷ՞

ԳԱՆԿ Բ. Գ.

Եսայիի մարգարէութեան մէջ գրուած է. «Տիրոջ բարկութիւնը չիջաւ. անոր ձեռքը դեռ բարձրացած կը մնայ՝ պատժելու համար» (Ես 9.12): Նոյն գիրքին մէջ Աստուած կ'ըսէ. «Ես պիտի պատժեմ աշխարհը իր չարութեան համար» (Ես 13. 11):

Կամ Ամովսի մարգարէութեան մէջ կը կարդանք. «...ձերբոլորանօրէնութիւններուն համար ձեզ պիտի պատժեմ» (Ամ 3.2):

Կամ Կողոսացիներու Նամակին մէջ. «...անիրաւը իր անիրաւութեան հատուցումն (= պատիժն) է, որ պիտի ստանայ» (Կղ 3.25):

Այս մէջբերումները բաւարար են ցոյց տալու, թէ ըստ Ս. Գիրքին Աստուած կը պատժէ:

Պատժող Աստուծոյ գաղափարը անընդունելի սկսած է դառնալ այսօրուան մարդուն համար: Ասիկա մէկ այլ նշանն է սանձարձակ ազատութեամբ կամ անպատասխանատուութեամբ գործելու իր ցանկութեան եւ ընթացքին:

Պէտք է անդրադառնալ, որ Ս. Գիրքի Աստուածը զանազան կրօնքներու սատիք կամ արիւնարբու աստուածներուն պէս չէ: Անիկա հաճոյք չ'առնէր պատժելէն

եւ ոչ ալ մեղաւորին կորուստը կ'ուզէ: Սաղմոսը կ'ըսէ. «Տէրը բարի է եւ ուղիղ. այդ պատճառով ալ՝ իր ճամբուն մէջ կը դաստիարակէ մեղաւորները» (Սղ 25.8): Գիտենք, որ Յիսուս ալ մեղաւորներուն հետ սեղան կը նստէր (տե՛ս Մթ 9.10): Կամ կը յիշենք Պետրոս առաքեալի խօսքը թէ՛ «Տէրը պարզապէս համբերատարութիւն ցոյց կու տայ, որովհետեւ չ'ուզեր որ որեւէ մէկը կորսուի, այլ՝ կ'ուզէ որ բոլորն ալ ապաշխարելու առիթ ունենան» (Բ. Պտ 3.9):

Ս. Գրային պատժող Աստուծոյ գաղափարին առիթով հարցումը որ պէտք է դրուի, սա է. ինչո՞ւ Աստուած կը պատժէ. բայց նախքան այդ՝ ի՞նչ է պատիժը:

Կողոսացիներու նամակէն մէջբերումին մէջ «հատուցում» բառը գործածուած է: Պատիժը հատուցում է, այսինքն՝ յանցաւոր, մեղաւոր որեւէ արարքի փոխարէնը տալ մըն է կամ փոխարէնը արարք մը ընել է: Այս հատուցումը ժխտական պատասխան մըն է կատարուած յանցաւոր կամ մեղաւոր որեւէ արարքի:

Պատիժը կրնայ երկու տեսակ ըլլալ. նախ՝ դաստիարակչական, եւ երկրորդ՝ կորստաբեր: Պատիժ կայ՝ որ դաստիարակելու համար է, եւ պատիժ կայ՝ որ կորուստի համար է:

Դաստիարակչական պատիժի առնչութեամբ կը մէջբերեմ Եբրայեցիներու նամակին այն հատուածը՝ որ կ'ըսէ. -

«Տէրը երբ կը խրատէ՝ կը նշանակէ, թէ կը սիրէ քեզ.

երբ կը պատժէ՝

կը նշանակէ, թէ քեզ իբր գաւակ կ'ընդունի»:

Ուստի համբերութեամբ ընդունեցէք Աստուծոյ խրատը, գիտնալով որ հօր մը պէս կը վարուի ձեզի հետ: ...Երկրաւոր հայրերը մեզ կը խրատեն միայն կարճ ժամանակ մը, իրենց ճիշդ դատած ձեւով, մինչ Աստուած կը խրատէ մեր բարիքին համար, որպէսզի հաղորդակից դառնանք իր սրբութեան: Ըիշդ է որ որեւէ յանդիմանութիւն նոյն պահուն չ'ուրախացներ, այլ կը տրտմեցնէ. բայց յետոյ՝ անով կը թուածներուն արդար կեանքի մը խաղաղութիւնը կը պարգեւէ» (Եբր 12.6-7, 10-11): Ըստ այս յորդորին, դաստիարակչական պատիժը Աստուծոյ

գաւակներուն համար է:

Կորստաբեր պատիժի առնչութեամբ նախ ըսեմ, որ անիկա վախճանական բնոյթ ունի կամ կործանում բերող պատիժ է: Յուդայի նամակը այս տեսակ պատիժին ենթարկուածները «կրկնապէս մեռած» կը յայտարարէ, այսինքն՝ Ֆիզիքապէս եւ հոգեւորապէս (Յդ հմր 13), եւ անոնց վախճան ցոյց կու տայ «յաւիտենական կրակի դատապարտութիւնը» (նոյն հմր 7):

Արդէն վերջին բացատրութեամբ նաեւ մասամբ պատասխանած եղայ այն հարցումին՝ թէ ինչո՞ւ Աստուած կը պատժէ:

Ի՞նչ պատճառներ վախճանական կործանումի կը տանին:

- Անհաւատութիւնը.

- Անիրաւութիւնը.

- Գոռոզութիւնը.

- Սեփական իմաստութեան վրայ հիացումը, որ յիմարացում է.

- Կիրքերուն գերութիւնը.

- Անզգամութիւնը.

- Նախանձը.

- Հակառակասիրութիւնը.

- Նենգութիւնը.

- Չարախօսութիւնը.

- Չարիք գործելը.

- Ագահութիւնը, եւ այլն:

Կարելի է շարքը մանրամասնել եւ երկարել: Աստուծոյ իւրաքանչիւրին մէջ կամակոր ստեղծէ, բացի կործանումէ:

Վերնագրին մէջ հարցը այսպէս դրուեցաւ. Աստուած կը պատժէ՞: Սակայն աւելի արդար է հարցումը նախ այսպէս դնել. Մարդը ինքզինք կը պատժէ՞:

Աստուծոյ պատիժը ամենէն առաջ մարդուն իր սեփական գլխուն բերած պատիժն իսկ է:

Ամովս մարգարէի բերնով Աստուած կը խրատէ.

- Տէրը փնտռեցէք, որպէսզի ապրիք:

- Բարութիւն փնտռեցէք, ո՛չ թէ չարութիւն, որպէսզի ապրիք:

Աստուծոյ պատիժը ամենէն առաջ մարդուն իր սեփական գլխուն բերած պատիժն իսկ է:

ԵՐԵՍՆՈՐԵԱԿ

Երկուշաբթի, 14 Սեպտեմբեր 2009

ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ

Հրագշաբթի, 17 Սեպտեմբեր 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնար, 20 Սեպտեմբեր 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագշաբթի, 24 Սեպտեմբեր 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Հաբաթ, 26 Սեպտեմբեր 2009

Ս. ԳԵՈՐԳ ԶՕՐԱՎԱՐ

Կրոնար, 27 Սեպտեմբեր 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագշաբթի, 01 Հոկտեմբեր 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնար, 04 Հոկտեմբեր 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագշաբթի, 08 Հոկտեմբեր 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնար, 11 Հոկտեմբեր 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագշաբթի, 15 Հոկտեմբեր 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնար, 18 Հոկտեմբեր 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ

Երկուշաբթի 14 Սեպտեմբեր 2009

Գերեզմանատուն
այցելութեան համար
հաճեցէք կապուիլ հոգեւոր
հովիւին՝ Տէր Գառնիկին
եւ ժամադրուիլ:

հեռ. 514 909 5203



ՀՈՎԻԻԸ ԸՆՏԱՆՆԻՔՆԵՐՈՒՄ ՄԷՁ

Անոնք որ կը փափաքին
հովիւին այցելութիւնը ունենալ
իրենց տունէն ներս,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,
հեռաձայնելով 514 331 5445 x203
կամ՝ 514 909 5203 քիւերէն մէկուն:

Սոյն թերթիւն ե-նամակով ստանալու
չաւար Ձեր ե-ՀԱՍՅԷՆ ՈՐՊՈՐԿԵՅԷ
eglise58@sourphagop.com-րս

Նախորդ թիւերը կրնաք գտնել
www.sourphagop.org/lradou
ԿԱՂԲԷՁԻՆ ՎՐԱՂ